ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XVI, № 6, 1963 Биологические науки

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԵՌԱՎՈՐԱԲԵԼԻՅԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ԵՎ ՊՐԻՄՈՐՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1958 թվականի ամռանը ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գլխավոր բուսաբանական այգու նախաձեռնությամբ արշավախումբ կազմակերպվեց դեպի Հեռավոր Արևելք։ Արշավախմբին մասնակցում էին նաև Երևանի, Նովոսիբիրսկի, Ալմա-Աթայի, Կարագանդայի, Խաբարովսկի և Վլադիվոստոկի բուսաբանական այգիների մի խումբ աշխատակիցներ։ Բուսաբանական այգիների միացյալ արշավախումբը ղեկավարում էր գլխավոր բուսաբանական այգու աշխատակից Վ. Ն. Վորոշիլովը։ Արշավախումբը նպատակադրվել էր մթերել Հեռավոր Արևելքի բուսականության հազվագյուտ տեսակների սերմեր, բուսակներ, բազմամյա խոտաբույսերի կոճղարմատներ, սոխուկներ, հավաքել հերբարիում, տեղում ծանոթանալ չափազանց հազվագյուտ և թանկարժեք տեսակների աճման ու զարգացման պայմաններին։ Միաժամանակ արշավախումբը պետք է ներս կապ ստեղծեր Միության տարբեր բուսաբանական այգիների միջև։

Նախատեսված մարշրուտի համաձայն, արշավախումբը աշխատելու էր Պրիմորսկի երկրամասի հարավային մասում՝ Կրասկինի, Օկտյաբրսկի, Օլգայի, Սուչանի, Խասանի, Վլադիվոստոկի, Ուսուրիյսկի և այլ շրջաններում, որտեղ բուսականությունը հանդիսանում է արևելասիբիրյան տայգայի, Ճապոնիայի, Մանջուրիայի ու Կորեայի բուսականության միասնությունը, ուր կենտրոնացած են ֆաունայի և ֆլորայի բազմաթիվ արժեքավոր ներկայացուցիչներ։

Հեռավոր Արևելքի բուսականության ուրույն կազմը պայմանավորված է յուրահատուկ կլիմայով, որը, չնայած իր մուսոնային բնույթին, շատ խիստ է, քանի որ մի կողմից՝ Ճապոնական կղզիներն արգելակում են տաք հոսանքների մուտքը դեպի մերձծովյան ափերը, իսկ մյուս կողմից՝ այդ շրջանները գտնվում են Արևելյան Սիբիրից փչող ցուրտ քամիների ազդեցության գոտում։ Հունվարի միջին ջերմաստիճանը —20,8° է, հուլիսինը՝ + 21,6°, տեղումների քանակը՝ 500—600 մմ։ Հաճախ լինում են տեղատարափ անձրևներ։ Եղել են դեպքեր, երբ մեկ օրում թափվել է 115 մմ անձրև։ Առաջին ձյունը գալիս է հոկտեմբերի վերջին, վերջինը՝ ապրիլի սկզբին։ Այստեղ հավերժական սառած շերտ չկա, սակայն ձմռանը հողը սառչում է 2—2,5 մ հաստության շերտով։ Գարունը երկարատև է և ցուրտ։ Ամառը համեմատաբար տաք է և խոնավ։ Ամռան սկզբին ամպամածությունն ու մառախուղը ուղղակի անտանելի են իրենց երկարատևությամբ ու կայունությամբ։ Ամենից լավ եղանակները լինում են սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, որոնք և աշխատանքի համար ընտրել էր արշավախումբը։

Ռելիեֆը լեռնոտ է, հիմնական լեռնաշղթան Սիխոտե-Ալինն է, որը ձգվում է հարավից դեպի հյուսիս-արևելք, իսկ նրա տոնձին երակները

ձգվում են, հիմնականում, դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևելք: Սիխոտե-Ալինի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1000 մ է, սակայն կան առանձին գագաթներ, որոնք ունեն 1800—2000 մ բարձրություն:

Բույսերի մի մասը առաջացել է երրորդային էրայում, այսինքն սառցապատումից առաջ: Հեռավոր արևելքի այս շրջաններում համատարած սառցապատում և սառույցների այնպիսի տեղաշարժ, ինչպիսին եղել է Ռուսաստանի եվրոպական մասում, չի եղել: Այստեղ սառցապատվել են միայն լեռների գագաթները:

Ինտերիմաստական այս առանձնահատկությունները բազմաթիվ հետազոտողների ուշադրությունն են հրավիրել Հեռավոր Արևելքի և հատկապես Պրիմորյեի հարավային և ծովափնյա շրջանների վրա: Այստեղ երկար տարիներ աշխատել են ակադեմիկոսներ Մաքսիմովիչը և Մաակը, երկրաբան Միդենդորֆն ու մեծ ճանապարհորդ-բնագետ Պրժևալսկին, անատոմներ Օվսյաննիկովն ու Սորոկին, աղջատրաբան Սրանները իր հայտնաբերած Դերսու Ուզալայի հետ և շատ ուրիշներ: Հեռավոր արևելքի բուսականության մանրակրկիտ ու բազմակողմանի ուսումնասիրությունը կատարվել է ակադեմիկոս Կոմարովի կողմից:

Արշավախմբի հիմնական բազան եղել է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Հեռավորարևելյան ֆիլիալի բուսաբանական այգին, որը տեղավորված է Օկեանական կայարանի մոտ՝ Վլադիվոստոկից մոտ 20 կմ դեպի հյուսիս:

Օկեանական կայարանի շրջակա անտառները մայրի-լայնատերևային են՝ բաղկացած 3—4 յարուս ծառերից և 2—3 յարուս խոտաբույսերից:

Առաջին յարուսի ծառերն են՝ կորեական մայրին (Pinus koraiensis Sieb. et Zucc), ամրողջատերև բալասանին (Abies holophylla Max.), դահուրյան կեչին (Betula dahurica Pall.), կալապանաքսը (Kalapanax septemlobum (Tunb.) Koidz.), մոնղոլական կաղնին (Quercus mongolica Fisch.), մանջուրական հացենին (Fraxinus manshurica Rupr.):

Երկրորդ յարուսն գրաղեցնում են մորուքավոր թզկին (Acer barbinerve Max.), կանաչակեղև թզկին (Acer tegmentosum Max.), մանրատերև թզկին (Acer mono Max.), ամուրյան մաակիան (Maackia amurensis Rupr. et Max.), սրատերև բոխին (Carpinus cordata Blume):

Երրորդ յարուսը կազմում են թփերը՝ մանջուրական արալիան (Aralia manshurica Rupr. et Max.), փշոտ էլեուտերոկոկը (Eleutherococcus senticosus Max.), տարատերև տխլենին (Corylus heterophylla Fisch), մանջուրական տխլենին (Corylus manshurica Max.), երկծաղիկ լեսպեդեցան (Lespedeza bicolor Turcz):

Առանձնահատուկ տեղ են գրավում փայթախոտերը, որոնք փաված են գետնի վրա կամ մագլցված ծառերին: Փայթախոտերից են՝ խոշորապտուղ ակտինիդիան (Actinidia arguta Planch.), բազմատերմ ակտինիդիան (Actinidia polygama Miq), սովորական ակտինիդիան (Actinidia kolomicta Max.), չինական շիզանդրան կամ լիմոնիկը (Schizandra chinensis (Turcz) Baill):

Խոտաբույսերի առաջին յարուսը կազմում են պտերները, իսկ երկրորդ յարուսը՝ հացազգի և այլ բույսերը:

Անտառում տաղաբիթի կցվածությունը 0,7—0,8 է, վերաճը՝ բավարար: Գերազանց վերաճ է տալիս բալասանին: Բուսակների քանակը մեկ հեկտարի վրա կազմում է 30—40 հազար և ավելի, տարիքը 1—15: Երբեմն բուսակները

այնքան շատ են, որ մեկ քառ. մետրի վրա նրանց քանակը հասնում է 80—100-ի։ Բավարար վերաճ են տալիս նաև կաղնին, թզկիները, կալապանաքը և մյուս ծառատեսակները։ Կորեական մայրու կոները խոշոր են, ունեն մինչև 20 սմ երկարություն և մինչև 600 գ կշիռ։ Սերմերը հասունանալուց հետո (երկրորդ տարվա հոկտեմբերին) կոները ծառից ընկնում են ամբողջությամբ, առանց բացվելու։ Զյան տակ մնում են մինչև գարուն։ Գարնանը խոնավության և ջերմության ազդեցության տակ կոների թեփուկները բացվում են, սկսում փտել, իսկ սերմերն ընկնելով խաշարի հատ շերտի մեջ, ծլում են։ Յուրաքանչյուր կոն պարունակում է 40—50 սերմ, որոնք թափվում են միևնույն տեղը, առաջացնելով բնական բնալին ցանք։ Մեր կողմից աուդված 25 բներից յուրաքանչյուրի մեջ կար 4—20 բուսակ, հետագայում նրանցից մնում է մեկը, իսկ մյուսները այս կամ այն պատճառով ոչնչանում են։ Կորեական մայրու սերմերը շատ խոշոր են (1000 հատը կշռում է ավելի քան 500 գ) և համեղ, պարունակում են մեծ քանակությամբ յուղ։ Այդ պատճառով էլ տեղական բնակիչները շատ են սիրում մայրու ընկուզիները և աշնանը հավաքում են մասսայաբար։

Այս անտառներում հիմնական էդիֆիկատորը եղել է կորեական մայրին, սակայն սկյուռների, փայտի խողերի և այլ կենդանիների կողմից նրա ընկուզիների ոչնչացման, ինչպես նաև անխնամ հատումների պատճառով սկսել է նվազել վերաճը և մայրին իր տեղը զիջել է այլ տեղատեսակներ և սաղարթավոր ծառերի։ Ներկայումս լուրջ ուշադրություն է դարձվում մայրու բնական վերաճի ապահովման վրա։

Դրիվալի հարուստ անտառները համարյա նույնն են, ինչ որ բուսաբանական այգու անտառները։ Ծովի մերձակայ բարձունքների գագաթներն զբաղված են թփուտներով, որոնք որոշ չափով իջնում են հարավային թեքությունների և միանում մոնղոլական կաղնուց կազմված անտառին։ Հիմնական թփերն են՝ ամուրյան ծորենին (Berberis amurensis Max.), կարմիր բոնչին (Viburnum sargentii Koehne), Մաքսիմովիչի իլենին (Euonymus maximoviczіana Prokh.), Մաքսիմովիչի ազնին (Crataegus maximoviczii C. Schn.), երկծաղիկ լեսպեդեցան, նստածաղիկ ականտոպանաքը (Acanthopanax sessili florum (Rupr. et Max.) Seem.), փշոտ էլեուտերոկոկը, չինական շիզանդրան, ակտինիդիայի նշված երեք տեսակները և այլն։

Ուսուրական ծոցի տարածքում աճում են զեկորատիվ մեծ արժեք ներկայացնող հետևյալ խոտաբույսերը՝ Allium senescens L., Cimicifuga dahurica Max., Arisaema amurense Max. և այլն։

Կեդրովայա Պադ արգելանոցը գտնվում է Վլադիվոստոկի դիմաց, Ամուրյան ծոցի մյուս ափին, Պրիմորսկայա կայարանից մոտ 5 կմ հեռավորության վրա։ Ներառել կորեական մայրու ծառերի քանակը բավականաչափ պակասել է։ Նրանք պահպանվել են միայն Կեդրովկա գետի վերին հոսանքի անտառներում։ Արգելանոցը հիմնականում տեղավորված է Կեդրովկա գետի ավազանում, որտեղ հյուսիսային ու հարավային թեքությունների և գետահովիտային անտառները խիստ տարբերվում են իրարից։

Հյուսիսային թեքությունները զբաղված են լայնատերև ծառատեսակների անտառներով։ Հիմնական տեսակներն են՝ մոնղոլական կաղնին, կնճիթատերև հացենին (Fraxinus rhynchophylla Hance), Կոմարովի թզկին (Acer komarovii Pojark.), մանջուրական հացենին, մանջուրական լորենին (Tilia manshu-

rica Rupr. et Max.), մանջուրական թզկին (Acer manshuricum Max.) և այլն: Ամենատարածված անտառային տիպն է՝ Quercetum dryopterosum, որտեղ ենթաանտառում հանդիպում են՝ ծաղկաշատ դիերվիլլան (Diervilla florida S. et Z.), տարտարական տխլենին և Մաքսիմովիչի բալենին (Cerasus maximoviczii (Rupr.) Kom.),

Հարավային թեքությունների նկատվում է տեսակային կազմի ավելի մեծ բազմազանություն, սակայն հիմնական տեսակները մնում են նույնը: Լեռնային անտառները հանդես են գալիս երկու հիմնական տիպով՝ Quercetum mixtoherbosum և Quercetum lespedeziosum.

Լեռների գագաթները հիմնականում ծածկված են թփերով, որոնցից են՝ Կոմարովի հաղարջենին (Ribes komarovii Pojark.), ամուրյան բշտիկապուղը (Physocarpus amurensis Max.), ամուրյան ծորենին (Berberis amurensis Max.), նրբակոթուն մասրենին (Rosa gracilepes Chrshan.), ուսուրական մասրենին (Rosa ussurensis Juz.), մետաքսյա սպիրակը (Spiraea sericea Turcz.) և այլն:

Գետահովտային անտառներում հիմնական տեսակներն են՝ թավոտ բալենին (Alnus hyrsuta Turcz.), ճապոնական բալենին (Alnus japonica Sieb.), մեծաթեփուկ չոսենիան (Chosenia macrolepis (Turcz.) Kom.), մանջուրական ընկուզենին (Juglans manshurica Max.), մանջուրական թզկին, գահուրյան կեչին, ցողավոր ուռենին (Salix rorida Laksch.), կողովի ուռենին (Salix viminalis L.), նրբասնակ ուռենին (Salix graciliastyla Miq.), մանջուրական խնձորենին (Malus manshurica (Max.) Kom.), փետրատերև սրոդենին (Crataegus pinnatifida Bunge) և այլն:

Դամովի հրվանդանը Պրիմորսկի երկրամասի ամենահարավային կետերից մեկն է, մի գեղատեսիլ բարձունք, որտեղից երեք կողմի վրա երևում է անծայրածիր կապույտ օվկիանոսը: Հրվանդանը պատված է իրարից կտրված անտառներով, որոնք հանդես են գալիս ծովափերին, այն էլ հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան թեքությունների վրա: Իսկ խիտ կտրված ժայռերի վրա աճում է միայն սոսվոր սոճին (Pinus funebris kom.), որը 20—25 մ բարձրությամբ և 50—60 սմ տրամագծով ծառ է: Այստեղ անտառ կազմող հիմնական տեսակը մոնղոլական կաղնին է, սակայն հանդիպում են նաև հնագույր տեսակներ՝ սոսոմնատոր կաղնին (Quercus dentata Thunb.), ուսուրական տանձենին (Pyrus ussuriensis Max.), քարային կեչին (Betula ermani Cham.), Շլիպենբախի մրտավարդը (Rhododendron schlippenbachi Max.), տարտարական տխլենին, Մաքսիմովիչի մասրենին (Rosa maximoviczіana Rgl., աճում է ուղղակի ծովափի քարերի մեջ), խոտաբույսերից առանձնապես հետաքրքիր են թանձանիկը, պրատիկոդոնը, մեխակը և այլն:

Վերինյայա Բուսայից մինչև Ռուսան կայարանն ընկած մերձծովային տարածություններում լայն շերտով տարածված են սոսոմնատոր կաղնու նոսր անտառները, որոնք հիմնականում ունեն մայրական ծագում և սաղարթ են հրդեհատեղերում: Այս մասերում հրդեհներ հաճախակի են լինում, որովհետև փարթամ խոտաբույսերը չորանալուց հետո սաղարթում են մեծ զանգված, որը անգամ ճանապարհորդների կրակից կամ կայծակներից բռնկվելով՝ ոչնչացնում է անտառային մեծ մասիվներ:

Զարիսրանից հետաքրքիր է Ռուսան լճի շրջակայքի բուսականությունը: Այս անտառը մարդու միջամտության շնորհիվ իր տեղը զիջում է սոսիաս-

ությունն: Այստեղ գանազան թեքությունների վրա մնացել են անտառների հետքեր և թփուտներ: Սակայն դրա փոխարեն շատ-ատանց խիտ է խոտածածկությունը: Հիմնական ծառատեսակը դարձյալ ասիական կաղնին է: Ծառերը 30—40 տարեկան են՝ 3—4 մ բարձրությամբ և բնի 20—25 սմ տրամագծով, ունեն մոցառային ծագում, պտղունների կցվածությունը 0,3—0,4 է: Մասամբ հանդիպում է նաև մոնղոլական կաղնին: Այստեղ հիմնականում գերակշռում է անտառային մեկ տիպ՝ Quercetum mixtoherbosum:

Շատ-ատանց արժեքավոր և դեկորատիվ խոտաբույսերից կարելի է հիշատակել՝ Miscanthus purpurescens Anders., M. Sacchariflorus (Max.) Hack, Lilium distichum Nakai, Iris orientalis Thumb., Platycodon grandiflorum (jacq) DC, Sedum ussuriensis Koch., Convallaria keisneri Miq և այլն:

Տարմա լճի հարավային կողմի բարձունքի վրա հանդիպում է մոնղոլական կաղնու անտառակ՝ Շլիպենբախի մրտավարդի ենթանտառով, կարմիրով յուրահատուկ անտառային տիպ՝ Quercetum rhododendronosum.

Առանձնապես հետաքրքիր է Էլգուգա և Սանդուգա գետերի հովիտների բուսականությունը (Վլադիվոստոկի շրջան): Մեծ Էլգուգա և Սանդուգա գետերի միջև ընկած բարձունքները, որոնք ծովի մակերևույթից ունեն 500—550 մ բարձրություն, հիմնականում պատված են մոնղոլական կաղնու անտառներով: Այստեղ հիմնականում կարելի է առանձնացնել անտառային երեք տիպ՝ Quercetum mixtoherbosum, Quercetum dryopterosum և Quercetum lespedeziosum: Կաղնին բոլոր անտառներում էլ տալիս է թուլ վերահ:

Բարձունքների ստորոտներում և առանձնապես գետերի ստորին հոսանքներում հանդիպում են նաև հետևյալ ծառատեսակներն ու թփերը՝ թավոտ և ճապոնական լաստենի, կնճիթատերև և մանջուրական հացենի, խոշորաթերփուկ չոզենիա, թզկու մի քանի տեսակներ, սրատատերև բոխի, մանջուրական ընկուզենի, երկծաղիկ լեսպեդեցա, փշոտ էլեուտերոկոկ, Մաակի թխենի (Padus maakii (Rupr.) Kom.), ամուրյան թավշածառ (Phellodendron amurense Rupr.), մանջուրական հաղարջենի (Ribes manshuricum (Max.) Kom.), բուրինյան գերամատ (Viburnum burejanum Herder.), Մաքսիմովիչի ուռենի (Salix maximoviczii Kom.), ամուրյան եղրևանի (Syringa amurensis Rupr.), Մաակի ցախակեռաս (Lonicera maackii Rupr.) և այլն:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում փոքրաթփվողները՝ ամուրյան խաղողը (Vitis amurensis Rupr.), չինական շիզանդրան, մանջուրական զբրմանդը (Aristolochia manshuriensis Kom.), ուսուրական կուսախաղողը (Ampelopsis brevipedunculata (Max. Trautv.), ամուրյան լուանասերմը (Menispermum dahuricum DC), ակտինիդիաները և այլն:

Բնակչության նոսր լինելու պատճառով ամուրյան խաղողի և շիզանդրայի (լիմոնենիկի) մեծ քանակությամբ պտուղներ աշնանը չեն հավաքվում: Երբեմն ենթանտառը (հատկապես անտառի նոսր տեղերում) ամբողջությամբ պատված է խաղողով և շիզանդրայով: Ամուրյան խաղողի պտուղները մանր են, կլոր, սև, քաղցր և տոխպ, խաղողից տեղական բնակիչները պատրաստում են յուրահատուկ գինի: Շիզանդրայի պտուղները կարմիր են, թթվաշաքաղցր և ունեն բուժիչ հատկություն: Որպես դեկորատիվ բույս բոլորից արժեքավոր է զրմանդը, որը խոշոր փաթաթվող բույս է, հասնում է ամենաբարձր ծառերի գագաթներին, իրար շաղկապում մի քանի ծառեր և ամբողջը վերածում իսկական ջունգլիների: Նրա խոշոր սրտաձև փայլուն տերևները և

փարունգանման գնդեցիկ պտուղները արտասովոր գեղեցկություն են տալիս անտառին:

Գետերի ակունքների անտառներում, որոնք սահմանակից են Չինական ժողովրդական Հանրապետությանը, հանդիպում են մի շարք այլ տեսակներ՝ սպիտակակեղև բալասանին (Abies nephrolepis Max.), կորեական մայրին, ալանյան եղևնին (Picea jezoensis Carr.) և մասամբ դահուրյան խիժաբիճին (Larix dahurica Turcz.): Մեծ էլդուգայի ակունքի անտառների ամենատարածված տեսակներից մեկն է Abietum dryopterosum-ը: Այս անտառներում առաջին յարուսը կազմում են սպիտակ բալասանին, կորեական մայրին, ալանյան եղևնին, երկրորդ շարահերկը՝ մանջուրական թեղին, մոլուքական թեղին, մանջուրական արալիան, ենթանտառը՝ Մաքսիմովիչի հաղարջենին, մանջուրական հաղարջենին և փշոտ էլեուտերոկոկը:

Կցվածությունը 0,8 է, կազմը՝ 7 Բ + 2 Ս + 1 Ե: Խոտածածկույթը հիմնականում կազմված է պտերներից (Dryopteris crassirhizoma Nakai), որոնք զբաղեցնում են խոտածածկույթի 70%-ը, 25%-ը կազմում է Brachybotrys paridiformis Max., իսկ 5%-ը՝ Aconitum sp.: Խոտածածկույթում հանդիպում են նաև աննշան քանակությամբ այլ տեսակներ:

Ուրույն հետաքրքրություն է ներկայացնում Օկտյաբրսկի շրջանի Չերնյատինո գյուղի շրջակայքի բուսականությունը: Այստեղ հիմնականում մոնղոլական կաղնու մացառային ծագում ունեցող անտառներն են, իսկ շատ բարձունքներ ու լանջեր էլ ծածկված են միայն երկծաղիկ լեսպեդեցիայի և մասամբ տարատերև տխլենու խիտ թփուտներով:

Չերնյատինո գյուղը հեռացած 2,5 կմ հեռավորության վրա Սուլֆուն գետի ձախ ափի փոքրիկ բարձունքի լանջերում հանդիպում են հետևյալ հետաքրքիր տեսակները՝ ճապոնական կուսախաղողը (Ampelopsis japonica C. K. Schn), սիբիրական ծիրանենին (Armeniaca sibirica (L.) Lam.), Մաակի իլենին (Eunymus maackii Rupr.) և մարակակոթի մի քանի տեսակներ: Առանձնապես հետաքրքիր է ճապոնական կուսախաղողը, որն ունի նուրբ ցողուններ և խիստ կարուված տերևներ: Ողմանները փնջաձև են: Յուրաքանչյուր խոշոր փնջային արմատ 10—25 սմ երկարության վրա ունի գլանաձև խոշոր հաստեցված՝ «պալարա», որի տրամագիծը 2—4 սմ է, երկարությունը՝ 10—15 սմ: Հաստեցվածից շարունակվում է բարակ արմատը: Յուրաքանչյուր թփի արմատների վրա լինում է 10—15 «պալարա», «պալարների» հետացման դեպքում արմատները չեն վերականգնվում և բույսերը չորանում են:

Զարմանալի յուրահատուկ է Օլգայի շրջանի բուսականությունը: Օլգա գետի ափերի անտառները հիմնականում ունեն մացառային ծագում, որտեղ գերիշխող տեսակը դարձյալ հանդիսանում է մոնղոլական կաղնին: Այստեղ հանդիպում են հետևյալ հետաքրքիր բույսերը՝ մետաքսյա սպիրեան (Spiraea sericea Turcz.), գորշավուն մարակակոթը (Clematis fusca Turcz.), սալոտենի սպիրեան (Spiraea salicifolia L.), Cimicifuga dahurica (Turcz.) Max., Cimicifuga simplex Wormsk, Iris setosa Pall.

Եկուսի հրվանդանի հարավ-արևելյան ծոփափին, որը խիստ կարուված է բարձր քարաժայռերով, նույնպես տարածված են մոնղոլական կաղնու անտառները: Քարաժայռերի վրա հանդիպում են դահուրյան գիհին (Juniperus dahurica Pall.) և դահուրյան դապիֆորան (Dasiphora dahurica (Nesfl) Kom.).

Յուրահատուկ էր Դունդասի բուսականությունը: Այստեղ տարածված են խիճաքիճա-լայնատերևային անտառներ: Հիմնական ծառատեսակներն են՝ մոնղոլական կաղնին, դահուրյան կեչին և դահուրյան խիժափիճին (Larix dahurica Turcz.), կցվածությունը՝ 0,5—0,7, նկատվում է կաղնու բավարար, կեչու մասնակի և խիժափիճու անբավարար վերաճ: Ենթանտառում հիմնականում տարածված են հետևյալ թփերը՝ ամուրյան մրտավարդը (Rhododendron mucronulatum Turcz.), խոշորապտուղ ակտինիդիան, սովորական ակտինիդիան, ուսուրական մասրենին, կարմիր բոնչին, նրբատերև հասմիկը (Philadelphus tenuifolius Rupr. et Max.), կնճռոտ մասրենին (Rosa rugosa Thunb.) և այլն: Արդեն հոկտեմբեր ամիսն էր, սակայն մրտավարդը գտնվում էր ծաղկաբերթիթ վիճակում, մի կողմից էլ արդեն հասունացել էին պտուղները:

Կրեատովկա բարձունքի (գտնվում է Օլգա ավանի մոտ, ծովի մակերևույթից ունի մոտ 500 մ բարձրություն) վրա և թեքություններում մեծ տարածություններ են զբաղեցնում խոշոր քարակույտերը, որտեղ հանդիպում են հատ ու կենտ՝ մեկական կամ խմբերով, հետևյալ թփերը՝ դահուրյան գիհի, դաճաճ սոճի (Pinus pumila Rgl.), ուսուրական գժնիկ (Rhamnus ussuriensis V. Vassil), բարակակոթուն մասրենի և այլն:

Pinus pumila-ն ցածրաճ ծառ կամ թուփ է՝ 3—5 մ բարձրությամբ, կազմում է խիտ անանցանելի թփուտներ: Կոները մանր են, հասունանում են երկրորդ տարում:

Դահուրյան գիհին մի քանդամանքն փոխած է քարերի վրա և հիշեցնում է Juniperus depressa-ին, նման է նրան թե՛ կոներով և թե՛ ասեղնատերևներով: Մնացած անտառները խառն են, կազմված մոնղոլական կաղնուց և կրեական մայրուց:

Զափարդանց հեռաքրքիր էր Սլավյանկի շրջանի Լեռնա-տայգային կայանի և Սուպուտինկի արգելանոցի բուսականությունը:

Լեռնա-տայգային կայանի անտառները խառն են, որտեղ հիմնական տեսակներն են՝ կրեական մայրին, սպիտակակեղև բալասանին, մոնղոլական կաղնին, կնճիթատերև և մանջուրական հացենիները, դահուրյան կեչին, կարամախին (Populus tremula L.), մանջուրական կեչին (Betula manshurica (Rgl.) Nakai) և այլն: Կազմը՝ 4 P_l + 3 Q_q + 2 U + 1 Q_z + C + խփ + + կազմ.: Կցվածությունը՝ 0,6—0,7:

Այստեղ հանդիպեցին մեզ համար նոր հետևյալ բույսերը՝ (Delphinium maackianum Rgl. Cypripedium macranthum Sw., Hypericum sp. և այլն:

Առանձին խմբերով տարածված են հետևյալ թփերը՝ դահուրյան մասրենին (Rosa dahurica Pall.), սրբապան իլենին (Euonymus sacrosancta Koidz.), նատաժադիկ սկանտոպանակը, փշոտ էլեուտերոկոկը, երիծադիկ լեսպեդեցան, Մաակի ցախակեռասը, ամուրյան ծորենին և այլն:

Սուպուտինկի հիանալի արգելանոցում թե՛ բուսականությունը և թե՛ կենդանական աշխարհը մնում են նույնությամբ, իսկ Սուպուտինկա գետի ափին որպես թանգարան պահպանվում է այն փոքրիկ անակ-ընակարանը, ուր երկար տարիներ ապրել և աշխատել է ակադ. Կոմարովը:

Այստեղ անտառները նույնպես խառն են, կազմված համարյա նույն տեսակներից, ինչ-որ լեռնա-տայգային կայանի անտառները, փոխվում է միայն կազմը և կցվածությունը:

Սուպրեմինկա գետի վերին հոսանքում արդեն գերակշռում է եղևնին: Սուպրեմինկայի անտառները ներկայացված են չափազանց խոշոր ծառերով: Այստեղ կարելի է հանդիպել կորեական մայրու՝ 40—45 մ բարձրությամբ և 1—1,5 մ տրամագծով, կաղամախիներ՝ 35—40 մ բարձրությամբ և 1,5—1,7 մ տրամագծով հսկա ծառերի:

Թփերից չափազանց մեծ տարածում ունեն մորակակոթի մի քանի տեսակները, էլեուտերոկոկը, լեսպեդեցան, շիզանդրան, սկոմինիդիայի մի շարք տեսակներ և այլն: Այստեղ մեզ առաջին անգամ հանդիպեց չինական պրինցեպիան (Princepia chinensis (Oliver) Kom):

Այսպիսով, Պրիմորսկի երկրամասի անտառները, ինչպես իրավացիորեն նշել է Կոմարովը, կարելի է բաժանել 3 խմբի,

1. Ծառն (տանդնա-լայնատերևային) անտառներ—հիմնական էդիֆիկատորներն են՝ կորեական մայրին, ամրողջաեզր բալասանին, եղևնին, մոնղոլական կաղնին, գահուրյան կեչին: Ծառատեսակներն ու թփերը հանդես են գալիս 4—6 շարահարկով, խոտաբույսերը՝ 2—3: Այս անտառները գրավում են բարձունքները, հանդիպում են բոլոր էքսպոզիցիաներում:

2. Գետահովտային անտառներ — գրավում են գետերի հովիտները և ցածրադիր վայրերը, հիմնական ծառատեսակներն են՝ մանջուրական ընկուզենին, լաստենին, ուռենին:

3. Կաղնու անտառներ—գրավում են նախորդ երկու խմբերի միջանկյալ տարածությունները, հիմնական էդիֆիկատորը մոնղոլական կաղնին է:

Պրիմորսկի երկրամասի ծառերն ու թփերը կազմում են շուրջ 150 տեսակ, որոնց 65 տեսակները տալիս են տեխնիկական հումք՝ դարբաղանյութեր, ներկեր, յուղ, եթերներ, ձյութ, սպիրտ, խցան և այլն: Կան նաև շատ դեղաբույսեր, որոնց թվում աշխարհահռչակ ժենշենը (Panax schinseng Nees) և նրան փոխարինող էխինոպանաքսը (Echinopanax elatum Nakai):

Առանձնապես գնահատելի են պտղատու տեսակները՝ մանջուրական խնձորենին, ուսուրական տանձենին, մանջուրական ընկուզենին. Մաքսիմովիչի ազնին, տարտարին և մանջուրական տխլենիները, ամուրական խաղողը, ակտինիդիանները, շիզանդրան, կորեական մայրին և այլն, որոնք տալիս են մեծ քանակությամբ արժեքավոր պտուղներ:

Եռամյա համերաշխ և քրտնաջան աշխատանքի շնորհիվ արշավախումբը հավաքեց սերմերի և բույսերի չափազանց արժեքավոր կոլեկցիա: Հավաքված նյութերը հավասարաչափ բաժանվում էին արշավախմբի մասնակիցների վրա և սիստեմատիկաբար ուղարկվում համապատասխան բուսաբանական ալբոմներին: Միայն Երևանի բուսաբանական այգին ստացել է՝

Կենդանի բույսեր — 65 տեսակ, ընդհանուր քանակով՝ 1040 բույս, որից ծառեր, թփեր և փոքրաթփոցներ — 52 տեսակ՝ 805 բույս և ծաղկատու բազմամյա խոտաբույսեր — 13 տեսակ՝ 235 բույս.

սերմեր — 141 տեսակի, 20,2 կգ ընդհանուր կշռով, որից ծառաբույսեր — 90 տեսակ, 111 նմուշ՝ 19 կգ, գեկորատիվ խոտաբույսեր — 51 տեսակ, 23 նմուշ՝ 1,2 կգ.

Հերբարիում — 121 տեսակ, յուրաքանչյուր տեսակից 9 թերթ, ընդամենը 363 թերթ՝ որից ծառաբույսերի — 92 տեսակ՝ 276 թերթ, խոտաբույսերի — 29 տեսակ՝ 87 թերթ:

Բերված բույսերից Երևանի բոտանիական այգում ներմուծումս աճում են ատամնավոր և մոնղոլական կաղնիները, թավոտ բալենին, ճապոնական կուսախոտորը, մանջուրական ընկուզենին, մանջուրական ծիրանենին և բազմաթիվ այլ տեսակներ:

Հայկական ՍՍՌ ԳԱ
Բոտանիական ինստիտուտ

Ստացվել է 21.XII 1962 թ.

А. А. ГРИГОРЯН

О ДАЛЬНЕВОСТОЧНОЙ ЭКСПЕДИЦИИ БОТАНИЧЕСКИХ САДОВ СССР И О ЛЕСАХ ПРИМОРСКОГО КРАЯ

Резюме

Летом 1958 г. по инициативе Главного ботанического сада АН СССР была организована объединенная научная экспедиция на Дальний Восток. В экспедиции участвовали сотрудники ботанических садов Новосибирска, Хабаровска, Алма-Аты, Караганды, Владивостока и Еревана.

Экспедицией руководил сотрудник Главного ботанического сада В. Н. Ворошилов. Целью экспедиции были как сбор семян, живых растений и гербарий редких и ценных видов дальневосточной флоры, так и ознакомление с условиями их местообитания.

Экспедиция работала в Краскинском, Хасанском, Владивостокском, Октябрьском, Сучанском, Партизанском, Ольгинском, Славянском и Уссурийском районах, а также в районе Владивостокского горсовета. Опорным пунктом экспедиции был Ботанический сад Дальневосточного филиала АН СССР, находящийся на станции Океанской.

Одновременно со сбором материала члены экспедиции ознакомились со смешанными лесами окрестностей Ботанического сада, Богатой Гривы, Горно-таежной станции, Супутинского заповедника, верхних притоков рек Эльдуга и Сандуга, Ольгинского района; с дубовыми лесами Краскинского, Хасанского, Владивостокского, Октябрьского и других районов; с пойменными лесами вдоль рек Кедровка, Эльдуга, Сандуга, Супутинка и других.

В смешанных лесах основными эдификаторами являются кедр корейский и дуб монгольский, а в некоторых местах пихта цельнокройная и белокорая; ель аянская и лиственница даурская; в дубовых лесах—дуб монгольский, а изредка дуб зубчатый; в пойменных лесах ольха пушистая и японская, различные виды ив.

В этих лесах встречаются липа маньчжурская, береза даурская и маньчжурская, ясень маньчжурский и носолистный, граб сердцелистный, маакия амурская, бархат амурский, яблоня маньчжурская, орех маньчжурский, несколько видов клена (зеленокорый, бородатый, ложнозибольдов, мелколистный, желтый), вяз сродственный, осина и другие. В подлеске, в основном, распространены леспедеца двуцветная и элеутеро-

кокк колючий Однако часто встречаются также лещина разнолистная и маньчжурская, акантопанакс сидячецветный, аралия маньчжурская, сирень амурская, секуринега ветвецветная, пузыреплодник амурский, калина красная и буреинская, некоторые виды бересклета, смородины, таволги, розы, рододендрона и др. Из лиан большой интерес представляют актинидии (острая, коломикта, носатая, жиральда), лимонник китайский, виноград амурский, аристолохия маньчжурская, виноградовник японский и уссурийский, луносемянник даурский и другие.

В течение трехмесячной работы экспедиция собрала ценную коллекцию семян и растений. Весь собранный материал был распределен между участниками экспедиции и выслан соответствующему ботаническому саду. Ереванский ботанический сад получил живых растений 65 видов в количестве 1040 экземпляров, семена 141 вида, весом 20,2 кг и гербарий—121 вида в количестве 363 листов.